ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«24» հոկտեմբերի 2018թ. N 34-Հ

<<ԳՅՈՒՄՐԻԻ ՍԵԼԵԿՑԻՈՆ ԿԱՅԱՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ /ՆՇԱՆԱԿՄԱՆ/ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 3-րդ և 12-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2005 թվականի օգոստոսի 10-ի N 129-Ն հրամանի պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) <<Գյումրիի սելեկցիոն կայան>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ընտրության (նշանակման) համար հայտարարել բաց մրցույթ՝ 2018 թվականի դեկտեմբերի 3-ին, ժամը 10^{00}-ին:
2. Նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատարին՝
1) երկու անգամ, ինգօրյա պարբերականությամբ ապահովել սույն հրամանի և մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը՝ Նախարարության պաշտոնական կայքէջում և զանգվածային լրատվության միջոցներով.
2) ապահովել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2005 թվականի օգեստոսի 10-ի N 129-Ն հրամանից բխող անհրաժեշտ միջոցառումները:
3. Նախարարության անձնակազմի կառավարման բաժնի պետի պաշտոնակատարին՝ ապահովել մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացնող քաղաքացիների փաստաթղթերի ընդունումը և մրցույթի անցկացման վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հայտարարում է բաց մրցույթ՝ «Գյումրիի սելեկցիոն կայան» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյումրիի սելեկցիոն կայան» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- համապատասխան բնագավառի բարձրագույն կրթություն,
- ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,
- իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում ՀՀ Սահմանադրություն, համապատասխան ոլորտի ՀՀ օրենսդրություն և իրավական այլ ակտեր),
- պետական կազմակերպության զարգացման և բարեփոխման ծրագիր (հայեցակարգ, հիմնադրույթներ) մշակելու կարողություն:

Լրացուցիչ չափանիշներն են՝

- տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն,
- ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն,
- առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- ✓ դիմում /ձևը լրացվում է փաստաթղթերը հանձնելիս/,
- ✓ մեկ լուսանկար 3x4 չափի.
- ✓ ինքնակենսագրություն,
- ✓ բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
- ✓ կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված),
- ✓ բնութագիր վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել),
- ✓ քաղվածք՝ աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում),
- ✓ տեղեկանք մշտական բնակության վայրից,
- ✓ հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),

Մրցույթին մասնակցելու փաստաթղթերը նախարարության անձնակազմի կառավարման բաժին ներկայացնել անձամբ՝ անձնագրով և պահանջվող փաստաթղթերի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն աշխատանքային օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը:

Դիմումներն ընդունվում են 2018թ. հոկտեմբերի 31-ից մինչև նոյեմբերի 12-ը ներառյալ:

Մրցույթը տեղի կունենա 2018թ. դեկտեմբերի 3-ին ժամը 10:00-ին, *Նախարարության շենքում /ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 3/:*

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության անձնակազմի կառավարման բաժին, հեռ. ՝ 011-52-58-57